

Ծայրագոյն վարդապետը գուր տեղը չէր, որ բանաստեղծի մը մականունը կը կրէր: ... Բայց պէտք է քալել... Պոլիսը ձգելով ուրիշներու վրձինին: Ու չմոռնալ երիտասարդ ուսուցիչը, Նիկիոյ շրջանէն, հին ու անուանի ընտանիքի մը արժանաւոր շառաւիղ, որ անոր պատմեց իր գեղէն, անոր յիմար քաջերէն, շրջանին հոծ հայութենէն, այգիներէն ու ձիթենիներէն: Ան էր, որ Մաթիկին տուած էր իմ ալ անունը, իբր «արժանի տեսակցութեան», ինչպէս նաեւ մեր շրջանին վրայ մանրամասն, տեղագրօրէն կատարեալ ծանօթութիւններ:

Մաթիկը գիտէր, երբ ինծի ինկաւ դէպի հիւսիս բոլոր գեղերուն անունները, մօտաւոր բնակչութիւնը, վստահելի մարդերը, վտանգաւոր անցքերը: ... Այդ շաբաթը, աւա՛ղ՝

Երագի նման անցել-գնացել

Էլ չէր դառնալու...

Քաղաքի կառավարիչին շատ քաղաքավար թելադրումովը անոնք հրաւիրուեցան իրենց ուխտը գործադրելու դէպի Ատաբազար-Արմաշ:

Այս հրաւերը ձերբակալման բանաձեւ մըն էր, երբեմն գործադրելի՝ սա գիծին վրայ, ինչպէս դիտել տուաւ ուսուցիչը: Այն ատե՞ն: Առաջնորդը չէր կրցած հասկնալ, այսինքն՝ ընդունիլ կարելիութիւնը սա ողիսականին: Մոսկովայի ուսանողը անկարող էր խօսքէ կեղծիքի: Հարազատ յեղափոխական՞ն: Բայց դիւրին չէր այդ պիտակը հազցնել սա տղուն: Պոլսոյ մօտ վայրերուն մէջ, ջարդերը կանխող պատանութեամբ ու անոնցմով արիւնոտ երիտասարդութեամբ ամէն հայ չէր կրնար կազմակերպուած, մահազիր յեղափոխականին այնքան վտանգահար ու վտանգաւոր տիպարը հաշտեցնել սա միամիտ, խօսուն, խանդավառ քարոզիչին, որ կը խաղար իր կեանքին հետ, բայց առանց որոշ ծրագրի, ու այնքան դիւրաւ կ'ընէր մատչելի իր գաղափարները առաջին հանդիպողին: